

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 24

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 31.01. 2018թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 29 (քսանինն) անդամից 24-ը (քսանչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Մինասյան Սահակ Գարուշի** — Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Ֆարմանյան Անահիտ Ժորայի** — Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր
3. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
4. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
6. **Պողոսյան Բազրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
7. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ-ուսումնական մասի պետ
8. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** — Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
9. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
10. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ

11. **Սարգսյան Մամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
13. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
14. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
15. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
16. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
17. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
18. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
19. **Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ
20. **Արամյան Կարեն Արմենի** — ՇՊՀ ՈԻԽ նախագահ, ռազմական ամբիոն «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող
21. **Խաչատրյան Լիլիթ Վարդանի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և մեթոդիկա», 4-րդ կուրսի ուսանողուհի
22. **Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
23. **Մելքոնյան Արմեն Գրիգորի** — Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)

24. **Չարչօլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1.1 Մանկավարժության ամբիոնի դասախոս, բան. գիտ. թեկնածու Լուսինե Վահրամի Գևորգյանին դոցենտի կոչում շնորհելու մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի
տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

1.2 Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու Գևորգ Վալերիկի Աղանյանի «Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները մարմնամարզության օրինակով» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի
տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

2. ա) 2016-2017 ուստարվա համալսարանի գիտական գործունեության մասին հաշվետվություն և 2018թ.-ի աշխատանքային պլանի հաստատման մասին

բ) 2016-2017 ուստարվա համալսարանի արտաքին համագործակցության մասին հաշվետվություն և 2018թ.-ի աշխատանքային պլանի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի
տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

3. ԵՊՀ-ի 2016-2017 ուստարվա ուսումնական գործունեության հաշվետվության մասին

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացիՊ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ե. Սերոբյան**

4. Ֆակուլտետների կանոնադրությունների հաստատման մասին

Պատ.՝ Ուսումնամեթոդական գործընթացիՊ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ե. Սերոբյան**

Դեկաններ՝ **Թ. Մելիքյան**

Ռ. Մարդոյան

Օֆ. Հովհաննիսյան

5. ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունքների գնահատման հայեցակարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտքարտուղար Կ. Պետրոսյան

6. ՇՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության ընթացակարգ

Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ՝ **Ռ. Քալաջյան**

7. ՇՊՀ-ի ավագ դպրոցի կանոնադրության հաստատման մասին

ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն՝ Կ. Դարբինյան

8. Ընթացիկ հարցեր

8.1 «Երիտասարդների զարգացում» ազգային եռամյա ծրագրի մասին

Հաղ.՝ գիտքարտուղար Կ. Պետրոսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

1.1 Մանկավարժության ամբիոնի դասախոս, բան. գիտ. թեկնածու Լուսինե Վահրամի Գևորգյանին դոցենտի կոչում շնորհելու մասին

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին և համապատասխան փաստաթղթերը:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Լուսինե Վահրամի Գևորգյան	Մանկավարժության օնի ասիստենտ	Ժ.00.01 – «Մանկավարժության էություն և պատմություն»

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Դրմեյան Հենրիկ (նախագահ), Խաչատրյան Վալերի, Խաչատրյան Թերեզա (անդամներ):

Քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հենրիկ Դրմեյանը ներկայացրեց հետևյալ արդյունքը.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Լուսինե Վահրամի Գևորգյան	24	0	0

Հաշվի առնելով, որ ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 24-ը. կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0) Լուսինե Վահրամի Գևորգյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ Ժ.00.01 – «Մանկավարժության

տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.2 Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու Գևորգ Վալերիկի Աղանյանի «Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության առանձնահատկություն-

ները մարմնամարզության օրինակով» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով արտաքին գրախոսման դրական կարծիքները՝ ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու Գևորգ Վալերիկի Աղանյանի «Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները մարմնամարզության օրինակով» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ա) 2016-2017 ուստարվա համալսարանի գիտական գործունեության մասին հաշվետվություն և 2018թ.-ի աշխատանքային պլանի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համալսարանի գիտական գործունեության մասին հաշվետվությունը հակիրճ՝ նշելով որ այն նախօրոք ուղարկվել էր գիտական խորհրդի անդամներին ծանոթանալու և դիտարկումներ կատարելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

1. Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանը՝ նշելով, որ Ա. Ֆարմանյանի ներկայացրած գիտական տեղեկագրում ՊԴ կազմի տպագրված հոդվածների թիվը չի համապատասխանում իրականին:

Ա. Ֆարմանյանը պատասխանեց, որ կարող են լինել ընդամենը 1-2 հոդվածների քանակի տարբերություններ, նշելով, որ բուհը ծախսում է բավականին գումար գիտական տեղեկագրի հրատարակման համար, իսկ պրոֆեսորադասախոսական կազմից ոչ բոլոր դասախոսներն են տպագրվում այնտեղ, բացի այդ մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ միշտ նույն դասախոսներն են տպագրվում:

2. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր Ս. Սարգսյանը, որին հետաքրքրում էր այն հարցը, որ ըստ տիկին Ֆարմանյանի ներկայացման, բուհի դասախոսների կեսից ավելին կոչում և աստիճան չունեն, արդյոք կան այս հարցին առնչվող տվյալներ հանրապետության այլ բուհերից համեմատություն անցկացնելու համար:

Ա. Ֆարմանյանը պատասխանեց, որ նման ցուցանիշներ չունի:

3. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Պատմություն» 2-րդ կուրսի մագիստրատուրայի ուսանող Ա. Մելքոնյանը նշեց, որ ցանկալի կլիներ, որ մագիստրոսները մագիստրական թեզի ներկայացման հետ զուգահեռ բուհի տեղեկագրում տպագրվեն իրենց թեմայից բխող որևէ հոդվածով:

Ա. Ֆարմանյանը պատասխանեց, որ իհարկե, ուսանողների ներգրավվածությունը գիտական ու հետազոտական աշխատանքներին ողջունելի է և իր կարծիքով այն մագիստրոսները, որոնք ունեն 85, 86 և բարձր գնահատականներ կարող են ներգրավվել այս աշխատանքներում:

4. Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր Ա. Հովհաննիսյանի կարծիքով համալսարանի գիտական գործունեության մասին հաշվետվության մեջ չի արձաձվել, բուհի ամբիոնների կողմից որպես առաջատար կազմակերպություն, թեկնածուական և դոկտորական ատենախոսություններին տրվող կարծիքների մասին հարցը, ինչը նպաստում է միջբուհական գիտական հարաբերությունների մերձեցմանն ու զարգացմանը:

Ա. Ֆարմանյանը շնորհակալություն հայտնեց պրոֆեսոր Հովհաննիսյանին, նշելով, որ հարցը իսկապես շատ կարևոր է և իր կողմից այն այսուհետ ուշադրության կարժանանա:

5. Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Մարգարյանը հարց ուղղեց, այն մասին, թե համալսարանի գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնը ինչ մեխանիզմներ է կիրառում միջազգային համատեղ հետազոտական աշխատանքներում բուհի ներգրավվածությունն ապահովելու համար:

Ա. Ֆարմանյանը խոսեց Հոբիգոն 2020 միջազգային հետազոտական ծրագրի մասին և նշեց, որ բուհում քաղաքականություն պետք է մշակվի մարդկային ռեսուրսները միջազգային գիտահետազոտական ծրագրերի պահանջներին համապատասխանեցնելու առումով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2016-2017 ուստարվա համալսարանի գիտական գործունեությունը գնահատել բավարար, հանձնարարել գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրենին մինչև ս/թ-ի մարտի 1-ը ներկայացնել հայեցակարգ՝ կենտրոնի աշխատանքային գործունեության զարգացման վերաբերյալ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

բ) 2016-2017 ուստարվա համալսարանի արտաքին համագործակցության մասին հաշվետվություն և 2018թ.-ի աշխատանքային պլանի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Լ. Մարտիրոսյանի դիտարկմամբ բուհի արտաքին համագործակցության կենտրոնի միջոցով իրականացվող ծրագրերի և հաշվետվության մեջ գրառված քաղաքների անվանումների գրություններում նկատելի են մասնակի սխալներ՝ կապված թարգմանության հետ, որը պետք է շտկվի, հատկապես, որ համացանցով դա տեսանելի է:

Պարոն Մարտիրոսյանը նշեց նաև, որ տիկին Ֆարմանյանի արտաքին համագործակցության մասին հաշվետվությունից տեղեկանում ենք, որ բուհի մագիստրոս Թամարա Հովհաննիսյանը շարժունության ծրագրերից մեկին մասնակցելով՝ Սլովենյայի

Նովա Գորիցա համալսարանում «համակարգչային ծրագրավորում» մասնագիտությամբ, գերազանց գնահատականներով կուտակել է կրեդիտները, իսկ նրա թեզը որպես մեթոդական աշխատանք տպագրվել է Նովա Գորիցայի համալսարանում, սակայն Թամարա Հովհաննիսյանը Հայաստան վերադառնալուց հետո նույն Համալսարանից հրավեր է ստացել և անցել այնտեղ աշխատանքի, ըստ Պարոն Մարտիրոսյանի,- մենք այստեղ նվաճում գրանցել չենք կարող, և շարունակեց, որ մեր համալսարանը ֆաունդ-ռեզինգի հետ կապված խնդիր ունի: Լ. Մարտիրոսյանն առաջարկեց համագործակցություն սկսել Հյուսիսային Կովկասի բուհերի հետ, հատկապես Արմավիր քաղաքի, քանի որ այնտեղ հայկական մեծ գաղթօջախ կա և իր կարծիքով համագործակցությունը երկուստեք ավելի նպատակահարմար կլինի:

Ռեկտոր Ս. Մինասյանը շնորհակալություն հայտնեց տիկին Ֆարմանյանին մանրագնին ուսումնասիրությունների և մանրամասն տեղեկությունների ու վերլուծությունների համար: Ռեկտորն իր խոսքում կանգ առավ հաշվետվությունների մեջ արձարծվող որոշ հարցերի՝ նշելով, որ իսկապես բուհի ամբիոններում սերնդափոխության հարցը, մեղմ ասած, լավ դրվածք չունի, ինչպես նաև արտահայտեց իր մտահոգումներից մեկն առ այն, որ բուհում ուսանողական աշխատանքային խմբեր կազմելով հայտարարվի ուսանողական դրամաշնորհ՝ հետազոտական աշխատանքների շրջանակներում: Հարցի հետ կապված ռեկտոր Ս. Մինասյանն առաջարկեց գիտական խորհրդի անդամներին ներկայացնել իրենց մտահոգումներն ու առաջարկությունները: Ս. Մինասյանն առաջարկեց համալսարանի գիտական գործունեության և արտաքին համագործակցության մասին հաշվետվությունները գնահատել բավարար՝ նշելով, որ հաշվետվության այս ձևն իրեն սպառել է և հանձնարարեց մեկ ամսվա ընթացքում բուհի համապատասխան կենտրոնների և գիտական խորհրդի անդամների կողմից աշխատանքային զարգացման հայեցակարգ ներկայացնել: Ռեկտոր Ս. Մինասյանն իր խոսքի ավարտին շեշտեց, որ մինչև գործողությունների պլան հաստատելը պետք է ունենալ հայեցակարգ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2016-2017 ուստարվա համալսարանի արտաքին համագործակցության աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, հանձնարարել գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի

տնօրենին մինչև ս/թ-ի մարտի 1-ը ներկայացնել հայեցակարգ՝ կենտրոնի աշխատանքային գործունեության զարգացման վերաբերյալ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի 2016-2017 ուստարվա ուսումնական գործունեության հաշվետվության մասին

Հաղ՝ Ուսումնամեթոդական գործընթացիՊ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ե. Սերոբյան**

Պրոռեկտոր Ե. Սերոբյանը ներկայացրեց համալսարանի ուսումնական գործունեության մասին հաշվետվությունը հակիրճ՝ նույնպես նշելով որ այն նախօրոք ուղարկվել էր գիտական խորհրդի անդամներին ծանոթանալու և դիտարկումներ կատարելու նպատակով:

Ե. Սերոբյանը կանգ առավ հատկապես ուսանողական համակազմի, նրանց առաջադիմության վերլուծությանն ըստ կրթական ծրագրերի, դասախոսական կազմի բաշխմանն ըստ աշխատանքային պայմանագրերի ձևերի հարցերի վրա:

Պարոն Սերոբյանի հաշվետվության մեջ ներառված էր նաև ՇՊՀ-ի ավագ դպրոցի և քոլեջի ուսումնական գործունեությունը՝ առանձնահատուկ վերլուծություններով:

Հաշվետվության վերջում պարոն Սերոբյանը նշեց բուհի, դպրոցի և քոլեջի ուսումնական գործընթացներում իրականացվող անելիքները:

Ռեկտոր Ս. Մինասյանը շնորհակալություն հայտնեց պարոն Սերոբյանին մանրամասն տեղեկությունների ու վերլուծությունների համար, առաջարկեց համալսարանի ուսումնական գործունեության մասին հաշվետվությունը գնահատել բավարար և հանձնարարեց մեկ ամսվա ընթացքում ուսումնամեթոդական կենտրոնին աշխատանքային զարգացման հայեցակարգ ներկայացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2016-2017 ուստարվա ուսումնական աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, հանձնարարել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրենին մինչև ս/թ-ի մարտի 1-ը

ներկայացնել հայեցակարգ՝ կենտրոնի աշխատանքային գործունեության զարգացման վերաբերյալ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետների կանոնադրությունների հաստատման մասին

Պատ.՝ Ուսումնամեթոդական գործընթացիՊ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ե. Սերոբյան**

Դեկաններ՝Թ. Մելիքյան

Ռ. Մարդոյան

Օֆ. Հովհաննիսյան

Բ. Պողոսյան

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի բնագիտամաթեմատիկական, մանկավարժության, հումանիտար գիտությունների և արվեստի, սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետների կանոնադրությունները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունքների գնահատման հայեցակարգի հաստատման մասին

Հատ.՝ գիտքարտուղար **Կ. Պետրոսյան**

ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունքների գնահատման հայեցակարգը նախօրոք էլեկտրոնային նամակի միջոցով ներկայացվել էր գիտական խորհրդի անդամներին դիտարկումներ կատարելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունքների գնահատման» հայեցակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության ընթացակարգ

Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ՝ **Ռ. Քալաջյան**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Տարեկան նախահաշվի ծախսային հատվածի տարբերակված բաշխման քաղաքականության» հայեցակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

7. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի ավագ դպրոցի կանոնադրության հաստատման մասին

ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն՝ **Կ. Դարբինյան**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի կանոնադրությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

8.1 ԼՍԵՑԻՆ՝

1. «Երիտասարդների զարգացում» ազգային եռամյա ծրագրի մասին

Հաղ. գիտքարտուղար **Կ. Պետրոսյան**

Կ. Պետրոսյանը ներկայացրեց, որ «Այ Էյ Բի» միջազգային Բիզնես Ակադեմիան մեկնարկել է Կոկա-կոլա Հելլենիկ Արմենիա ընկերության «Երիտասարդների զարգացում» ազգային եռամյա ծրագիրը, որի նպատակներից մեկը կատարելագործել

բուհական շրջանավարտների և պոտենցիալ երիտասարդ ձեռնարկատերերի բիզնես գիտելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Երիտասարդների զարգացում» ազգային եռամյա ծրագրին մասնակցելու նպատակով հանձնարարել ամբիոնի վարիչներին մինչև երեսուն տարեկան երիտասարդ դասախոսների համակազմից ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոն ներկայացնել անվանացանկ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝	Ս. Մինասյան
Գիտական խորհրդի քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր՝	Ա. Ֆարմանյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր՝	Ե. Սերոբյան
Արհմիութենական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ՝	Բ. Պողոսյան
Ռազմական ամբիոնի պետի տեղակալ՝	Ե. Տոնոյան
Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր՝	Ս. Սարգսյան
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր՝	Հ. Դրմեյան
Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր՝	Ա. Հովհաննիսյան
Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ՝	Ս. Հայրապետյան

Մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր՝
Պատմության և փիլիսոփայության ամբիոնի
դոցենտ՝

Ռ. Մարդոյան

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի
դոցենտ՝

Հ. Խորիկյան

Միջմշակութային հաղորդակցության և
գրոսաշրջության ամբիոնի ասիստենտ՝

Թ. Մելիքյան

Մանկավարժության ամբիոնի դոցենտ՝

Շ. Տեր-Ադամյան

Մանկավարժության ամբիոնի դոցենտ՝

Լ. Ղուկասյան

Ռրակի ապահովման և կառավարման
կենտրոնի տնօրեն՝

Լ. Հակոբյան

Աշխարհագրության, կենսաբանության և
քիմիայի ամբիոնի դոցենտ՝

Ա. Մարգարյան

Նախագորակոչային և ֆիզիկական
պատրաստություն IV կուրսի ուսանող՝

Լ. Մարտիրոսյան

Մանկավարժություն և մեթոդիկա IV կուրսի
ուսանող՝

Կ. Արամյան

Անգլերեն լեզու և գրականություն III կուրսի
ուսանող՝

Լ. Խաչատրյան

Կիրառական արվեստ III կուրսի ուսանող՝

Հ. Ավետիսյան

Մաթեմատիկա IV կուրսի ուսանող՝

Ա. Մխիթարյան

ՈւԳԸ նախագահ, աշխարհագրություն I
կուրսի ուսանող (մագիստրատուրա)՝

Ն. Կոստանյան

ՈւԽ նախագահ, պատմություն II կուրսի
ուսանող (մագիստրատուրա)՝

Ք. Հարությունյան

Պատմություն II կուրսի ուսանող (հեռակա
բակալավրիատ)

Ա. Մելքոնյան

Ա. Չարչոլյան